«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 Ապրիլի 2023, N 6 - 5

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով **«2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, ուսումնական բաժինը, դեկանատները և ամբիոնները պատշաճ աշխատանք են կատարել առաջին կիսամյակի ուսումնական գործընթացը և քննաշրջանը կազմակերպելու ուղղությամբ: Կիսամյակի ընթացքում ուսումնառված դասընթացների յուրացման աստիճանը ստուգելու նպատակով ուսանողների գիտելիքի ստուգումները կազմակերպվել են գործող կարգի պահանջներին համապատասխան՝ ըստ ուսումնական պլաններում դասընթացների գիտելիքի ստուգման մատնանշված եղանակների: Ուսանողների ընթացիկ ակտիվությունը և բացակայությունները հաշվառվել են UMS համակարգում, ուսումնառության նյութերի տրամադրման համար Moodle հարթակում ձևավորված 2404 մոդուլներից, գործող ձևաչափին համապատասխան, սեպտեմբերի 16-ի դրությամբ պատշաճ լրացված են եղել 2268-ը (94%-ը), հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 2376-ը (98%-ը): Քննագրաֆիկների խախտումներ և ձախողումներ չեն արձանագրվել:

2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանին (առանց 1-ին և 2-րդ վերահանձնումների) մասնակցել է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա կրթաձևերի **6045** ուսանող, որոնք բոլոր մասնագիտական ծրագրերի առաջին կիսամյակում ներառված **729** դասընթացների գծով (այդ թվում 497-ը՝ քննությամբ ավարտվող, 232-ը՝ ստուգարքով ավարտվող) մասնակցել են **44560** գիտելիքի ստուգման: **Ուսման առաջադիմությունը կազմել է 70,3%**: Առաջադիմությունը զգալի բարձր է առկա ուսուցման մագիստրատուրայում և բակալավրիատում, էապես ցածր է հեռակա ուսուցման բակալավրիատում:

1798 ուսանող (բոլոր ուսանողների 30%-ը) մեկ կամ ավելի դասընթացից ունեցել է վերահանձնում: Ընդհանուր առմամբ, 1798 ուսանողները միասին վերցրած ունեցել են **4867** վերահանձնում: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **1010** ուսանող (բոլոր ուսանողների 17%-ը), որոնք միասին վերցրած ունեցել են 2460 վերահանձնում: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **284** ուսանող (բոլոր ուսանողների 4,6%-ը), որոնք միասին վերցրած

մասնակցել են 364 վերահանձնման: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **107** ուսանող (բոլոր ուսանողների 2%-ը), որոնք միասին վերցրած մասնակցել են 117 վերահանձնման: **36** ուսանող 39 քննության 2-րդ վերահանձնումը տեղափոխել է այլ կիսամյակ: **103** ուսանող (բոլոր ուսանողների 2%-ը) հեռացվել է համալսարանից: Ըստ կրթական ծրագրերի և կրթաձևերի՝ քննաշրջանի ընթացքում արձանագրվել են հետևյալ արդյունքները.

1. Առկա ուսուցման բակալավրիատի 1-4-րդ կուրսերի **3433** ուսանող մասնակցել է **28256** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **807**-ը: Առաջադիմությունը կազմել է **76%**: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **482** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **217** ուսանող, 2-րդ վերահանձնմանը՝ **87** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումը այլ կիսամյակ է տեղափոխել **21** ուսանող: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվել է **44** ուսանող:
2. Հեռակա ուսուցման բակալավրիատի 1-5-րդ կուրսերի **2116** ուսանող մասնակցել է **13106** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **880**-ը: Առաջադիմությունը կազմել է **58%**: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **469** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **60** ուսանող, 2-րդ վերահանձնմանը՝ **14** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումը այլ կիսամյակ է տեղափոխել **14** ուսանող: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվել է **40** ուսանող:
3. Առկա ուսուցման մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի **404** ուսանող մասնակցել է **2800** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **86**-ը: Առաջադիմությունը կազմել է **79%**: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **50** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **6** ուսանող, 2-րդ վերահանձնմանը՝ **5** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումն այլ կիսամյակ է տեղափոխել **1** ուսանող: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվել է **19** ուսանող:
4. Հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի **92** ուսանող մասնակցել է **398** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **25**-ը: Առաջադիմությունը կազմել է **73%**: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **9** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **1** ուսանող, 2-րդ վերահանձնմանը՝ **1** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող

ակադեմիական պարտքերի վերահանձնումն այլ կիսամյակ ոչ մի ուսանող չի տեղափոխել: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվող ուսանող չի եղել:

Առկա ուսուցման բակալավրիատում ուսման առաջադիմությունը կազմել է 76%: Այն շարունակել է նվազել վերջին տարիների նույն ցուցանիշի համեմատությամբ (2021-2022՝ 78%, 2020-2021՝ 83,5%, 2019-2020՝ 84,7%, 2018-2019՝ 86,9%), ինչը հիմնականում պայմանավորվել է գնահատման գործընթացի նկատմամբ սահմանված հավելյալ վերահսկողությամբ: Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը կազմել է 79% (2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի 82%-ի և առաջին կիսամյակի 87,6%-ի համեմատությամբ): Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման առաջադիմությունը կազմել է 58% (2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի 57%-ի և առաջին կիսամյակի 59,2%-ի համեմատությամբ): Հեռակա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը կազմել է 73% (2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի 94%-ի և առաջին կիսամյակի 88,2%-ի համեմատությամբ):

Նախորդ տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի համեմատությամբ ուսման առաջադիմությունը առկա ուսուցման բակալավրիատում նվազել է 2,0%-ով, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 3,0%-ով, հեռակա ուսուցման բակալավրիատում աճել է 1,0%-ով, հեռակա ուսուցման մագիստրատուրայում նվազել է 21,0%-ով:

Առկա ուսուցման բակալավրիատում **28256** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **1900** բացասական գնահատական (6,7%), **19179** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (67,9%), **2756** գնահատական եղել է 14,01-17,0 միջակայքում (9,7%) և **4451** գնահատական եղել է 17,01-20,0 միջակայքում (15,7%): Առկա ուսուցման մագիստրատուրայում **2800** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **300** բացասական գնահատական (10,7%), **608** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (21,7%), **339** գնահատական եղել է 14,01-17,0 միջակայքում (12,1%) և **1553** գնահատական եղել է 17,01-20,0 միջակայքում (55,5%): Հեռակա ուսուցման բակալավրիատում **13106** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **2617** բացասական գնահատական (20%), **7310** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (55,8%), **1430** գնահատական եղել է 14,01-17,0 միջակայքում (10,9%) և **1749** գնահատական եղել է 17,01-20,0 միջակայքում (13,3%): Հեռակա ուսուցման մագիստրատուրայում **398** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **50** բացասական գնահատական (12,6%), **198** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (49,7%), **31** գնահատական եղել է 14,01-17,0 միջակայքում (7,8%) և **119** գնահատական եղել է 17,01-20,0 միջակայքում (29,9%):

Կույր գնահատման սկզբունքով գիտելիքի ստուգման և բանավոր քննությունների արդյունքները ամփոփիչ քննությունների փուլում **8,0-14,0** միջակայքում գրեթե միանման են, սակայն վերահանձնումների փուլում բանավոր քննությունների արդյունքները զգալի տարբերվում են համակարգչային քննությունների արդյունքներից: Առկա ուսուցման բակալավրիատում վերահանձնում ունեցել է **807** ուսանող, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ **880** ուսանող: Առկա ուսուցման բակալավրիատի 807 վերահանձնում

ունեցող ուսանողներից **482**-ը (59,7%-ը) մասնակցել են 2-րդ վերահանձնմանը: Հեռակա ուսուցման բակալավրիատի 880 վերահանձնում ունեցող ուսանողներից **469**-ը (53,2%-ը) մասնակցել են 2-րդ վերահանձնմանը: Առկա ուսուցման բակալավրիատի 482 վերահանձնում ունեցող ուսանողներից 2-րդ վերահանձնումը չի հաղթահարել **217**-ը (45%-ը), հեռակա ուսուցման բակալավրիատի 469 վերահանձնում ունեցող ուսանողներից՝ **60**-ը (12,7%-ը):

Առկա ուսուցման բակալավրիատում համակարգչային քննությամբ կամ ստուգարքով ավարտվող դասընթացներից **անբավարար գնահատականների տեսակարար կշիռը 43%** է. **8,0-14,0** միջակայքում գնահատականների տեսակարար կշիռը **31%** է, **14,01-17,0** միջակայքում՝ **43%**, **17,01-20,0** միջակայքում՝ **17%**: **Գերազանց գնահատականների 83%-ը և լավ գնահատականների 57%-ը ուսանողներն ապահովել են բանավոր ստուգմամբ ավարտվող դասընթացներից:**

Ըստ ֆակուլտետների ուսման առաջադիմությունը միջին բուհականից (70,3%) զգալի բարձր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում (77,9%), բարձր է հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետում (73,0%), մոտ է միջինին կառավարման (69,7%) և ֆինանսական (69,4%) ֆակուլտետներում, էապես ցածր է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների (63,5%) և ինֆորմատիկայի և վիճակագրության (61,7%) ֆակուլտետներում: Առկա կրթաձևում առաջադիմությունը միջին բուհականից (76,7%) զգալի բարձր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (82,7%) և ֆինանսական (80,4%) ֆակուլտետներում, մոտ է միջինին հաշվապահական հաշվառման և աուդիտի (77,5%) և կառավարման (77,2%) ֆակուլտետներում, ցածր է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետում (72,2%), էապես ցածր է ինֆորմատիկայի և վիճակագրության (61,1%) ֆակուլտետում: Հեռակա կրթաձևում առաջադիմությունը միջին բուհականից (59%) զգալի բարձր է ինֆորմատիկայի և վիճակագրության (71,4%), մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (69,2%) և հաշվապահական հաշվառման և աուդիտի (67,7%) ֆակուլտետներում, մոտ է միջինին ֆինանսական (57,4%) և կառավարման (55,5%) ֆակուլտետներում, զգալի ցածր է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների (41,1%) ֆակուլտետում: Մագիստրոսի կրթական ծրագրով առաջադիմությունը միջին բուհականից (77,6%) զգալի բարձր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (90,9%) և ինֆորմատիկայի և վիճակագրության (87,5%) ֆակուլտետներում, բարձր է հաշվապահական հաշվառման և աուդիտի (80,0%) և տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների (80,0%) ֆակուլտետներում, զգալի ցածր է ֆինանսական (64,7%) և կառավարման (64,4%) ֆակուլտետներում:

Արձանագրելով կատարված աշխատանքները՝ գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է, որ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Թեպետ ուսանողների գնահատումը բարելավվել և ավելի արժանահավատ է դարձել, իսկ բանավոր քննությունների արդյունքները բացասական և միջին

գնահատականների միջակայքում էապես մոտեցել են համակարգչային քննությունների արդյունքներին, սակայն գնահատման անաչառությունը դեռևս շարունակում է մնալ ոչ բավարար հատկապես 17,01-20,0 միավորի միջակայքում:

2. Թեպետ բանավոր և համակարգչային քննությունների արդյունքները ամփոփիչ քննության և 1-ին վերահանձնման փուլերում միմյանց էապես մոտեցել են առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում, սակայն 2-րդ վերահանձնման և հաջորդող վերահանձնումների փուլերում դրանք էապես շեղված են (շուրջ 3,8 անգամ) և շարունակում են մնալ ոչ բավարար մակարդակի վրա: Առկա ուսուցման բակալավրիատում հեռացումների 80 և ավելի տոկոսը պայմանավորված է ուսանողների համակարգչային քննությունը չհաղթահարելու հանգամանքով:
3. Հոսքային առարկաների գծով միևնույն դասընթացի դասախոսների գնահատման քաղաքականությունն իրարից էապես շեղված է: Մասնավորապես՝ տնտեսագիտության տեսության, մակրոէկոնոմիկայի, վիճակագրության, բարձրագույն մաթեմատիկայի, ֆինանսների, միկրոէկոնոմիկայի և բիզնես վարչարարության ամբիոններում դասախոսների գնահատականները միմյանցից տարբերվում են 2,1-4 միավորով, կառավարման, միջազգային տնտեսական հարաբերությունների, մարքեթինգի, տնտեսամաթեմատիկական մեթոդների և կառավարման ամբիոններում՝ 1-2 միավորով:
4. Միջին առաջադիմության ցուցանիշից տարբեր ֆակուլտետների արդյունքները, ըստ կրթաձևերի և կրթական ծրագրերի, շարունակում են զգալիորեն միմյանցից շեղված մնալ:
5. Հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի միջին առաջադիմության ցուցանիշը շարունակում է մնալ մտահոգիչ ցածր:
6. Ընդհանուր առմամբ, առաջադիմության ցուցանիշի դինամիկան շարունակում է մտահոգիչ մնալ հատկապես բուհի զարգացման ռազմավարության նպատակային թիրախի ապահովման համատեքստում:
7. «Գերազանց» և «լավ» գնահատականներով քննաշրջանն ամփոփող ուսանողների թվում համակարգչային քննություններից նման արդյունքի զգալի ցածր տեսակարար կշիռը շարունակում է մնալ մտահոգիչ:
8. Ուսանողական հարցումների արդյունքները փաստում են, որ թեպետ արդիական գրականությամբ ապահովվածության խնդիրը հիմնականում լուծվել է, սակայն դեռևս առկա են հայալեզու գրականության և նյութերի չտրամադրման խնդիրներ:
9. Թերություններ կան դասախոսների կողմից ուսանողների ակտիվության և անհատական աշխատանքների գնահատման և էլեկտրոնային մատյաններում ամփոփման աշխատանքներում:

10. Զգալի թերություններ կան առկա թեստերում՝ հատկապես ոչ մասնագիտական դասընթացների թեստերում:

Ելնելով վերոգրյալից՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել ռեկտորատին՝**
   1) արձանագրված թերությունների վերացման համար մշակել որոշակի միջոցառումներ՝ նշելով պատասխանատուներին:

2. **Հանձնարարել դեկաններին՝**
   1) շարունակել դասախոսների և ուսանողների դասաձախողումների մշտադիտարկումները, դասաձախողումների դեպքերը քննարկել ֆակուլտետների գիտական խորհուրդների և ամբիոնների նիստերում՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա.
   2) խիստ վերահսկողություն սահմանել հեռակա կրթաձևում ուսանողների հաճախումների նկատմամբ, բացակայող և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ կատարել հասցեական աշխատանք.
   3) ֆակուլտետի ամբիոններում ներգրավված ակադեմիական կազմի կողմից ուսանողների գիտելիքի ստուգմամբ արձանագրած գնահատականների, վերահանձնումների, հեռացումների միջին վիճակագրական ցուցանիշներից շեղում ունեցող դեպքերը դարձնել ֆակուլտետների գիտական խորհուրդների քննարկման առարկա.
   4) խիստ հսկողություն սահմանել էլեկտրոնային մատյանների լրացման նկատմամբ.
   5) 2 ամիսը մեկ պարբերությամբ իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի ակտիվության գնահատականների մշտադիտարկում.
   6) ուժեղացնել ֆակուլտետի վերահսկողությունը հատկապես ակտիվության բաղադրիչի գնահատման և բանավոր քննությունների վերահանձնումների նկատմամբ.
   7) վերանայել համակարգչային քննությունների և բանավոր քննությունների ցանկն ու քննության ձևերը. ոչ մասնագիտական քննությունների փոխարեն համակարգչային քննություն դարձնել մասնագիտական դասընթացները կամ համակարգչային քննության փոխարեն գիտելիքի ստուգումը կազմակերպել հանձնարարվող հետազոտական կամ այլ վերլուծական (օրինակ՝ մասնագիտական քեյսերի կամ խնդիրների լուծում) աշխատանքով.

8) «Հայոց պատմություն-1» և «Հայոց պատմություն-2» դասընթացների քննաձևը 2023-2024 ուսումնական տարվանից դարձնել բանավոր.
9) մեծացնել ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ արտալսարանային աշխատանքի ծավալները. հսկողություն սահմանել դասախոսների արտալսարանային աշխատանքի պատշաճ ծավալով կատարման նկատմամբ:

3. Հանձնարարել ամբիոնի վարիչներին՝

1) պարբերաբար իրականացնել դասալսումներ և խիստ մշտադիտարկում ամբիոնների դասախոսների՝ հատկապես միջին ցուցանիշից էապես շեղված գնահատման քաղաքականություն ունեցող դասախոսների գնահատման պրակտիկայի նկատմամբ.
2) խիստ վերահսկողություն սահմանել Moodle հարթակ վերբեռնվող նյութերի բովանդակության նկատմամբ.
3) յուրաքանչյուր կիսամյակի առնվազն մեկ մասնագիտական դասընթացի համար մշակել համակարգչային ստուգման թեստային բազա:

4. Սույն որոշումը քննարկել ամբիոնների և ֆակուլտետների գիտական խորհուրդների նիստերում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. ապրիլ 18
Երևան